Աֆրահատա կամ Ֆրահատա Ասորվո կուտան։ Որչափ ալ բանասիրական նկատմամբ և արդի գիտության աչքի անհասանելի ու անվիճելի երևնա այս կարծիք և հնթադրություն, սակայն մեզ հարկ է հիշեցնել, որ ...Սրբուչն Հակոբա Վարուց գրիչք առ մեզ Հայանի ու բացարձակ խոսքով իրեն կվերագրեն այս գրվածքը։ Այսպիսով, ինքն իրեն հակասելով, Հ. Գար. Զ.-ն այս խնդրի լուծումը թողնում է հետագա հետազոտություններին և գյուտերին (էջ 24—25, համա. էջ 39), թեև նրան ծանոթ նորագույն հետազոտություններն այս խնդրին արդեն լուծել են անդառնալիորեն ոչ հօգուտ Մծբնացու։

Աֆրահատի հատերը հակայական նշանակություն ունեն չորրորդ դարի ասորական արևելքի պատմության, հռոմեական-պարսկական հարաբերությունների, ասորական քրիստոնեության առանձնահատկությունների, վանականության և անապատականության ծագման և այլ հարցերի համար, բայց մեր այս հոդվածի նպատակների մեջ չի մտնում այդ հարցերի պարզաբանումը։

Պրոֆ. Ե. ՏԵՐ-ՄԻՆԱՍՅԱՆ

ԵՐԿԱՆՔԻ ԱՌԱՋԱՅՈՒՄԸ ԸՍՏ ԳԱՌՆԻԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԻՑ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ՆՅՈՒԹԵՐԻ

Գառնիի պեղումների ժամանակ հայտնաբերված աղալու-տրորելու գործիքները հնարավորություն են տալիս դասակարգելու եղած նյութերը և պարզելու զարգացման այն ուղին, որ անցել է աղորիքը մինչև կլոր պտտվող երկանք դառնալը։ Պրիմիտիվ աղորիքը, հանդես գալով մարդկային հասարակության զարգացման վաղ շրջանում, հազարամյակներ շարունակ լուրջ փոփոխությունների չի ենթարկվել։ Նույնիսկ Ուրարտուում, որտեղ երկրագործությունը բավականին զարգացած էր, որպես աղալու-տրորելու գործիք կենցաղում դեռևս օգտագործվում էր պրիմիտիվ աղորիքը[1], եթե չհաշվենք սանդերն ու հավանգները։ Գառնիում հայտնաբերված աղալու-տրորելու գործիքները ցույց են տալիս, որ զարգացման հաջորդ աստիճանը հանդիսացել է «հրվող» աղորիքը[2]։ Գտնվել է հրվող հինգ աղորիք, պատրաստված ծակոտկեն բազալտից, որոնցից միայն մեկն է ամբողջական. մնացած չորսը կոտրված են, բայց կարելի է պարզ պատկերացում կազմել նրանց մասին։ Դրանք 25—34 սմ երկարության, 18—22 սմ լայնության, 3—10 սմ բարձրության քարեր են և պրիմիտիվ աղորիքներից տարբերվում են նրանով, որ քարագործը աղացի վերին քարի վրա երկայնքով փայտե լծակի համար ակոս է արել, իսկ աղորիքի երկու ծայրերին փոսիկներ՝ լծակն ամրացնելու համար։

Գառնիի հրվող աղորիքներիս ամբողջականը (32×19) ավելի վատ է մշակված, ակոսը խոր չէ (1—1,5 սմ), իսկ փոսիկ միայն մի ծայրից ունի, 9 սմ լայնությամբ և 4 սմ բարձրությամբ (տախտ. 1, Ա). կոտրվածներն ավելի լավ են մշակված։

Հրվող աղորիքների մի քանի օրինակ պահպանվում է ՀՍՍՌ ԳԱ պետական պատմական թանգարանում։ Դրանցից երկուսը (ՊՊԹ, № 2128/85, ՊՊԹ, № 637) մշակումով նման են Գառնիի հրվող աղորիքներին, միայն չափերը մի քիչ ավելի մեծ են (41×21 սմ և 39×24 սմ)։

Ավելի հետաքրքիր են թանգարանում պահվող մյուս երեք հրվող աղորիքները։ Մեկը (ՊՊԹ, № 2129/184, 40×22 սմ) ուշագրավ է նրանով, որ փայտե լծակի համար արվող ակոսի փոխարեն ունի երկայնքով արված թմբիկ (լայն. 5,5 սմ, բարձր. 1,5—2 սմ)։ Այսինքն, փոխանակ լծակը տեղավորելու քարի վրայի ակոսի մեջ, ինչպես նախորդներում էր, այդ թմբիկն են մտցրել լծակի վրա բացված ակոսի մեջ, հետևաբար լծակը բավականին բարձր է եղել և դեպի ձախ շարժելիս հիմնական ծանրությունն ընկել է ձախ կողմի վրա, իսկ դեպի աջ շարժելիս՝

---

[1] Б. Б. Пиотровский, Ванское царство (Урарту). Москва, 1959, էջ 133—142։ Նույնի՝ Основные этапы древнейшего земледелия в Армении, „Историко-филологический журнал", 1961, № 3—4, էջ 115։

[2] Հորիզոնական ամրացված փայտե ձողի միջոցով շարժման մեջ դրվող աղալու գործիքները կանվանենք «հրվող», ինչպես անվանում են մի շարք գիտնականներ։ տե՛ս Блаватский В. Д., Второй год работы Синдской экспедиции. КСИИМК, вып. 51, էջ 153։ Moritz L. A, Grain-Mills and Flour in Classical Antiquity, Oxford, 1958, էջ 52, 63ff.

ա- կողմի վրա (տախտ. 1, Բ)։ Այդ պատճառով էլ քարի աշխատող մակերեսին երկայնքով մեկ թեթև ուռուցիկություն է առաջացել։ Լծակը կապերով ամրացնելու համար երկու ծայրերին ունի էլիպսաձև փոսիկներ (լայն. 4 սմ, բարձր. 1 սմ)։ Երկայնքով արված այդպիսի թմբիկ ունի նաև մի ուրիշ հրվող աղորիք (ՊՊԹ, № 1742, 38×20 սմ), բայց վերջինս այդ թմբի ծայրերից ունի ուղղահայաց անցքեր, կողքի փոսիկների փոխարեն։ Այդ անցքերով անցկացրած թոկերով կամ դամբերով է ամրացվել հորիզոնական փայտը (տախտ. 2, Ա)։

Լծակի ամրացման միանգամայն այլ լուծում ունի մյուս հրվող աղորիքը (ՊՊԹ, № 397), որը հայտնաբերվել է Փարպի գյուղում։ Այն պատրաստված է ծակոտկեն բազալտից (36 սմ երկ., 21 սմ լայն., 12 սմ բարձր.) և, ի տարբերություն վերը նկարագրածների, ունի խոր ակոս (3 սմ՝ կենտրոնում), որը գնալով դեպի աջ ու ձախ ավելի է խորանում և դեմ առնում մի բարակ պատի, 1 սմ տրամագիծ ունեցող անցքով միանում է ծայրերի մեծ փոսիկներին (11 սմ լայն.), ակոսի լայնությունն է 5 սմ։ Այդ պատի բարձրությունը հավասար է ակոսի կենտրոնի բարձրությանը։ Սա հնարավորություն էր տալիս լծակը միանգամից կապել այդ անցքերի միջով անցկացրած թոկով (տախտ. 1, Բ)։ Հրվող աղորիքների բազմաթիվ օրինակներ, տարբեր մշակումով հայտնաբերվել է նաև Արմավիրում, պեղումների ժամանակ և գետնի երեսից։ Հրվող աղորիքների վերին քարերից բացի հայտնաբերվել են նաև տակի քարերը, որոնք, սակայն, բոլորն էլ կոտրված են։ Դրանք տարբեր հաստության, բայց բովանդակությամբ հարթ մակերեսով քարեր են։

Լծակի երևան գալը խթանեց աղալու-տրորելու գործիքի հետագա կոնստրուկտիվ բարելավմանը, որն ի վերջո հասցրեց պտտվող կլոր երկանքի ստեղծման։ Լծակը փոխեց պրիմիտիվ աղորիքի շարժման ձևը։ Լծակի օգնությամբ աղացը շարժման մեջ դնելու համար նրա մի ծայրն ամրացվում էր աղացի տակի անշարժ քարի կողքին, կենտրոնում ամրացված ուղղահայաց ձողին. այդ պատճառով լծակի մյուս ծայրից շարժելիս ստացվում էր ոչ թե ետ ու առաջ, այլ աջ ու ձախ աղեղնաձև շարժում։ Լծակը հնարավորություն տվեց կրկնակի մեծացնելու պրիմիտիվ աղորիքների վերին քարերի չափերը։ Այդպիսով, լծակավոր աղորիքը անհամեմատ ավելի արտադրանք կարող էր տալ։

Հրվող աղորիքը ստեղծեցին տեղական քարագործ վարպետները՝ պրիմիտիվ աղորիքի կատարելագործման միջոցով։ Դա պայմանավորված էր աղորիքի՝ նախորդ ամբողջ ժամանակաշրջանում կրած փոփոխություններով։ Այդ պրոցեսն իր ավարտին հասավ VI—III դդ. մ. թ. ա.։ Մենք հակված ենք նրա աղալու-տրորելու գործում գերիշխող դիրք գրավելու ժամանակաշրջանը համարել IV—III դդ. մ. թ. ա.։ Հրվող աղորիքներին ժամանակակից է Դառնիում հայտնաբերված մի այլ տիպի շատ հետաքրքիր աղաց։ Դա աշխատող մակերեսում քառանկյունի բազալտե քար է (երկ. 43 սմ, լայն. 23 սմ, բարձր. 22 սմ), որի աշխատող մակերեսը հարթ է, իսկ վերևից մշակված չէ։ Այն նույնպես շարժման մեջ է դրվել լծակի օգնությամբ, որի համար աշխատող մակերեսից 2—3 սմ վերև, 3 սմ խորությամբ գոտի է արված։ Աղացն այդ գոտիով սեղմվել է երկու փայտերի միջև, իսկ շարժման սկզբունքը նույնն է, ինչ որ վերը նկարագրած լծակավոր աղացներինը։ Այս աղացը բավականին ծանր է, և ըստ երևույթին շարժման մեջ են դրվել երկու հոգով (տախտ. 1, Բ)։ Մեր կարծիքով, այն նախատեսված է եղել ավելի որակյալ, բարակ ալյուր ստանալու համար։ Հրվող աղորիքը, անցման ղուտ տեղական ձև լինելով, չի հանդիպում Հայաստանի սահմաններից դուրս որևէ երկրում։

Հունաստանում VII—VI դդ. մ. թ. ա. պրիմիտիվ աղորիքից առաջանում է կլոր, կենտրոնում ձագարանման անցքով, առանց բռնակի աղացը, որը պրիմիտիվ աղորիքի նման շարժման մեջ էր դրվում երկու ձեռքով և շարժվում էր աջից-ձախ և հակառակը։ Դրանից VI—IV դդ. մ. թ. ա. առաջանում է քառանկյունի բրգաձև անցքով լծակի միջոցով շարժման մեջ դրվող աղացը[3]։

Հռոմայեցիները նման լծակավոր աղացներ ընդհանրապես չեն օգտագործել, ուստի այն չի հանդիպում Իտալիայի բնակավայրերի ու քաղաքների պեղումների ժամանակ[4]։ Վրաստանում[5] և Ադրբեջանում որևէ տեսակի լծակավոր աղացի հայտնաբերման փաստ մեզ հայտնի չէ։

---

[3] Пономарев Н. А., История техники мукомольного и крупяного производства, ч. I, Первобытно-общинный и рабовладельческий строй, Москва, 1955, էջ 50—54։

[4] Նույն տեղում, էջ 123։

[5] Ս. Բեգուկաձեն աղացների մասին իր աշխատանքում բերել է Թանդարանի բոլոր նյութերը, բայց նրանցում ոչ մի հրվող աղաց չկա, տե՛ս Бедукадзе С., К истории развития мельниц. Ручные мельницы, „Вестник гос. музея Грузии им. акад. Джанашиа", XIX—B, էջ 153—169։

Հրվող աղորիքը, պրիմիտիվ աղորիքների նկատմամբ ունեցած իր մեծ առավելություններով հանդերձ, դեռևս ուներ մի շարք թերություններ։ Դրանցից ամենահիմնականն այն էր, որ ամեն անգամ երկու քարերի միջև հացահատիկ լցնելու համար աղացը կանգնեցվում էր և վերին քարը բարձրացվում, դա շատ էր դանդաղեցնում առանց այն էլ դանդաղ ընթացող աշխատանքը։ Ուստի շուտով աղալու, տրորելու գործիքը նոր փոփոխությունների է ենթարկվում։ Գառնիում հայտնաբերված նոր տիպի լծակավոր աղացների[6] մի շարք հիանալի օրինակներ ունենք ծակոտկեն բազալտից պատրաստված։ Հրվող երկանքների վերին քարերը կրկնակի մեծ են հրվող աղորիքների վերին քարերից և գրեթե բառանկյան տեսք ունեն, իսկ ամենահիմնական տարբերությունը լծակի տակ կենտրոնում հացահատիկ լցնելու համար արված անցքն է, որտեղով առանց աղացը բարձրացնելու հացահատիկն ատիճանաբար ճեղքից կլցվեր աղացների արանքը (տախտ. 3, Ե)։

Գառնիի հրվող երկանքները վեցն են, որոնք իրենց մշակման տեխնիկայով, անցքերի ձևով և շինանյութով տարբերվում են իրարից։ Դրանցից երկուսն ամբողջական են, մեկն էլ բիչ թերի է ծայրից, մնացած երեքը կեսից կոտրված են (ակոսի երկայնքով)։ Կոտրվածներից մեկը ունի կիսակլոր ձև (24×35 սմ, հաստ. 10 սմ), ակոսի երկայնքով հացահատիկ լցնելու համար ճեղք է արված, որտեղ աղացն ավելի հաստ է (տախտ. 3, Ա)։ Այս հրվող երկանքին իր քարի տեսակով և մշակմամբ որոշ չափով նման է ամբողջական աղացը (42×40 սմ, հաստ. 10 սմ), որը ակոսին համապատասխան (լայն. 6,5 սմ) երկու կողքերից ունի փոսիկներ։ Ճեղքը նախորդի նման արված է ակոսի երկայնքով։ Որպեսզի հացահատիկ լցնելիս լծակը չխանգարի, աղացի վրա մի կողմում ճեղքին հավասար լայնությամբ ուղղանկյուն (8 սմ լայնությամբ և 2,5 սմ խորությամբ) փոս է արված, որը լծակի մոտ փոքր թերությամբ իջնում է դեպի ճեղքը (տախտ. 3, Բ)։ 1963 թ. պալատական շենքի առջև անտիկ շերտից գտնվեցին մեկ ամբողջական և մեկ բիչ թերի հրվող երկանքներ։ Ամբողջականը (38×38 սմ, բարձր. 18 սմ) հետաքրքիր է նրանով, որ ունի 2—3 սմ լայնությամբ և նույնքան էլ բարձրությամբ եզրեր, որով ամբողջ մակերեսի վրա հնարավորություն է ստեղծվում ավելի շատ հացահատիկ լցնելու. նրա ակոսը լայն է ու խոր, ճեղքն արված է ակոսի երկայնքով (տախտ. 2, Գ)։ Մյուսը (37×38 սմ, բարձր. 10 սմ) ակոսի երկայնքով բարձր եզրեր ունի (բարձր. 5 սմ) և ճեղքի մոտ, մի կողմում, հացահատիկ լցնելու համար արված ուղղանկյուն փոս (տախտ. 2, Դ)։

Ի տարբերություն վերոհիշյալ հրվող երկանքների, մնացած երկուսի հացահատիկ լցնելու ճեղքերը հատում են ակոսները։ Երկուսն էլ կոտրված են, մեկը (22×32 սմ, հաստ. 9 սմ) ակոսի միայն մի կողմում փոսիկ ունի։ Ճեղքի մասը կազմող հացահատիկ լցնելու համար արված փոսը (6,5 սմ) գնալով դեպի աղացի եզրը, ատիճանաբար բարձրանում ու լայնանում է (13 սմ) և կողքից, կենտրոնում լծակն ամրացնելու համար, մի փոսիկ էլ ունի. հավանաբար, այդ անցքում ամրացված գամի վրա հարմարեցվել է ձագարաձև մի սարք, որի անցքը դրվել է փոսի մեջ։ Դա հնարավորություն է տվել լրացուցիչ հացահատիկ լցնել նաև այդ ձագարի մեջ (տախտ. 3, Դ)։ Մյուսը (24×32 սմ, բարձր. 9,5 սմ) ավելի խնամքով է մշակված և ավելի կանոնավոր ու կատարյալ ձև ունի։ Քառանկյունի է, մի փոսիկով, խոր ակոսին խաչաձևող ճեղքի շուրջը 1,5—2 սմ բարձրությամբ և 3—4 սմ լայնությամբ պատակ ունի, ձագարաձև սեղմված անցքը գնալով նեղանում է (տախտ. 3, Ե)։

Գառնիի հրվող երկանքներն իրենց ձևով մերձենում են հունական աշխարհում տարածված խոր (կոնաձև, ռոմբաձև, ձվաձև) փոսերով լծակի միջոցով շարժման մեջ դրվող բառանկյունի երկանքներին, որոնցից շատ են հայտնաբերվել պեղումների ժամանակ Հունաստանում և նրա գաղութներում։ Օլինթոսի (հունական գաղութ Մակեդոնիայում) պեղումների ժամանակ հայտնաբերվել են մեծ քանակությամբ տարբեր տիպի աղացներ, որոնց թվում նաև լծակի միջոցով շարժման մեջ դրվող 30-ից ավելի աղացներ[7]։ Դրանք իրենց կառուցվածքով և աշխատելու սկզբունքով նման են Գառնիի հրվող երկանքներին։ Պատրաստված են կարծր քարից, ունեն 42—57 սմ երկարություն, 36—47 սմ լայնություն և 8—12 սմ հաստություն։ Նրանց մի մասը աշխատող մակերեսին ունի ոչ խոր ակոսներ, որոնք ծառայել են հացահատիկը նրանց վրա պահելու և աղալը դյուրացնելու նպատակին։ Այդպիսի ակոսներ ունեն նաև ներքին անշարժ քարերից մի քանիսը, որոնցից 12 հատ գտնվել է Օլինթոսում (45—49 սմ երկարությամբ, 30—

[6] Նոր հրվող աղացներն իրենց չափերի ու ձևի պատճառով կանվանենք հրվող երկանք։

[7] Robinson D. M., Excavations at Olinthus, II, Baltimore, 1930, էջ 186։



Surpomuly 1



Surpomuly 2

45 սմ լայնությամբ և 5—7 սմ հաստությամբ)։ Լծակների ամրացման համար կողքերից բոլորը չէ որ փոսիկներ ունեն, նրանցից մի մասին լծակը չի ամրացվել։

Դ. Ռոբինսոնը և Դ. Գրահամը հաղորդում են, որ այդ տիպի երկանքներ, բացի Հունաստանից գտնվել են նաև Փոքր Ասիայի ոչ հունական քաղաքներում։ Ենթադրվում է, որ վերոհիշյալ աղացները, որոնք չինությամբ (կարծր լավա), ձևերով ու չափերով շատ նման են իրար, պատրաստվել են Թերա կղզում (Կրետե կղզու մոտ) և այնտեղից տարածվել բոլոր հունական քաղաքները։ Նման աղացներ գտնվել են նաև Եգիպտոսի հելլենիստական քաղաքներում[8]։ Օլինթոսյան հրվող աղացների նման (ձևով և չափերով) մի երկանք էլ գտել է Վ. Ֆ. Գայդուկևիչը 1947 թ. Տիրիթաքիի պեղումների ժամանակ (Կերչի մոտ)։ Այն պատկանում է III—II դդ. մ. թ. ա. և ենթադրվում է, որ նույնպես բերվել է Թերա կղզուց[9]։ Հրվող երկանքներ շատ են հայտնաբերվել Անատոլիայում, Ալիշարի հելլենիստական շերտում[10], Սև ծովի հյուսիսային ափի հունական քաղաքներում՝ Օլվիայում[11], Խերսոնեսում[12], Թամանյան թերակղզում տարբեր ժամանակներում հայտնաբերվել են հրվող երկանքի բաղմաթիվ օրինակներ՝ 1936 թ. Լ. Պ. Խատկոյի կողմից մ. թ. ա. II դ. պատկանող աղաց[13], Վ. Դ. Բլավատսկու կողմից, մ. թ. ա. VI դ. հիմնադրված բնակավայրից, որտեղ աղացների թե՛ տակի և թե՛ վրայի բրգաձև անցքերով բեկորները, ինչպես Վ. Բլավատսկին է հաղորդում, աշխատող մակերեսներին ունեն եղնաձև տննշան խորության ակոսներ[14]։ Յուկորյան լիմանից արևմուտք ընկած հին բնակատեղիում[15], Զոլոտայա-Բալկա քաղաքատեղիում (Բերիսլավ քաղաքից 70—80 կմ Դնեպրով դեպի վեր), Ն. Ն. Պոդբերովի հետախուզության ժամանակ հայտնաբերված այդպիսի աղացը, որ տեղում պատրաստված ընդօրինակություն է, ունի մի քանի տարբերություններ բոսֆորյան երկանքներից[16]։

1949 թ. Իլուրատի պեղումների ժամանակ, քարե սանդերից և կլոր երկանքներից բացի, հայտնաբերվել է նաև «քառանկյունի երկանք»[17]։ Շատ հետաքրքիր է 1948 թ. Կիմերիկում բացված հացահատիկ աղալու սենյակը, որտեղ բացի երկու սանդերից գտնվել է նաև անմշակ քարերից պատրաստված մի սեղան և վերոհիշյալ քառանկյունի աղացների նման մի աղաց։ Շենքը կործանվել է հրգեհից III դ. մ. թ. ա.։ Ադացի տակի և վրայի քարերի աշխատող մակերեսներին կան վերը նկարագրած ակոսներից[18]։ Մերձկուրանյան մետո-սարմաթական ցեղերն օգտագործել են տափակ, ոչ ճիշտ ուղղանկյունի երկանքներ, որոնց տակի քարերն ավելի մեծ են։ Աշխատող մակերեսներին ունեն ակոսներ և վերին մասերը մշակված չեն, միայն կենտրոնում ունեն ոչ մեծ ձագարանման փոսեր, իսկ կողքերից՝ փոսիկներ, որոնցից մեկը երբեմն

---

[8] Robinson D. M. and Graham I. W., Excavations at Olinthus, VIII, „The Helenic Hous", Baltimore, 1930, էջ 326 and next.

[9] Пономарев Н. А., նշվ. աշխ., էջ 73։

[10] Erich F. Schmidt, Anatolia Through the Ages. Discoveries at the Alishar Mound, 1927—1929, Chicago, Illinois, էջ 139, 199։

[11] „Отчет императорской археологической комиссии за 1902 г.", Санкт-Петербург, 1904, էջ 27, նկ. 43—44։ Семенов-Зусер С. А., Отчет о раскопках в Ольвии в 1920—1921 гг., „Известия государственной академии истории материальной культуры", том X, вып. 5, 1931, էջ 8, նկ. 5; Пономарев Н. А., նշվ. աշխ. էջ 76, նկ. 50։

[12] „Отчет императорской археологической комиссии за 1903 г.", Санкт-Петербург, 1906, էջ 24, 32։

[13] Гайдукевич В. Ф., Боспорское царство, М.—Л., 1949, էջ 99, նկ. 9։

[14] Блаватский В. Д., Первый год работы Синдской экспедиции, КСИИМК, вып. XLVIII, էջ 73—74, նկ. 22 և նույնի՝ Второй год работы Синдской экспедиции, КСИИМК, вып. 51, էջ 153։

[15] Шелов Д. В., Раскопки Западно-Цукорского поселения на Тамани, КСИИМК, вып. 51, էջ 161—165։

[16] Либеров П. Д., Земледелие у скифских племен Поднепровья в VI—II вв. до н. э., „Материалы по истории земледелия СССР", сб. I, Москва, 1952, էջ 88—89։

[17] Гайдукевич В. Ф., Новые исследования Илурата, КСИИМК, вып. XXXVII, էջ 204—205։

[18] Зеест И. Б., Киммерикская мукомольная мастерская и зерновое хозяйство Боспора, КСИИМК, вып. XXXIII, 1950, էջ 99, նկ. 43։

լինում է վրայից։ Այս բոլոր աղացները պատկանում են I հազարամյակի երկրորդ կեսին։[19] Սիմֆերոպոլի դավառադիտական թանգարանում գտնվող սկյութական Նեապոլից հայտնաբերված այս տիպի աղացի ընդօրինակությունը իր ձևով բավական նման է Գառնիի հրվող երկանքներին[20]։

Աղալու գործիքների ուսումնասիրողներից ոմանք գտնում են, որ հրվող երկանքը հանդես է գալիս մ. թ. ա. VI դ.[21], իսկ մի մասն էլ համարում են մ. թ. ա. V—IV դդ.։ Մորգանտինայում (Սիցիլիա) հայտնաբերված աղալու գործիքները դասակարգող և ուսումնասիրող Վ. Դոնալդը հրվող երկանքը համարում է երկրորդ տիպը պրիմիտիվ աղորիքից հետո և հաղորդում, որ դրանք հայտնաբերվել են մ. թ. ա. IV դ. վերջի և III դ. սկզբի շեներից։ Վ. Դոնալդը չհամաձայնելով Լ. Ա. Մորիցի այն կարծիքին, թե Մորգանտինայում դրանք հանդես են եկել մ. թ. ա. VI դ., գտնում է, որ դրանք մ. թ. ա. IV դ. կեսերից վաղ չեն կարող հանդես եկած լինել[22]։ Դ. Մ. Ռոբինսոնը Օլինթոսի հրվող երկանքները թվագրում է մ. թ. ա. V դ. հետո[23]։

Վերը նկարագրված հունական երկանքները, հանդես գալով V—IV դդ. մ. թ. ա., կլոր երկանքների երևան գալուց հետո էլ երկար ժամանակ շարունակում են իրենց գոյությունը։ Այդ մասին են վկայում Բլուրատում և Կիմերիկի հացահատիկ աղալու սենյակում հայտնաբերված աղացները։ Դրանք շարժման մեջ դնելու գործիքների և աղալու, ալյուր ստանալու ամբողջ պրոցեսի մասին մեզ լավ պատկերացում են տալիս Բեոտիայում (սահմանակից էր Ատտիկային) և Մեգարում (Կորնթոսի պարանոցի հյուսիս-արևելյան մասում) հայտնաբերված թասերի վրայի պատկերները[24]։ Խեցեգործ նկարիչը պատկերել է վաղ հելլենիստական ժամանակաշրջանում (IV դ. մ. թ. ա.) գոյություն ունեցող ալյուր ստանալու բոլոր գործիքները՝ գործողության մեջ։ Բեոտյան թասի աջ ու ձախ կողմերում պատկերված են վերը նկարագրված հրվող երկանքները։ Դրանք առանձին սեղանների վրա են դրված. երկար լծակի մի ծայրը ամրացված է սեղանի կողքին եղած ուղղահայաց ձողին, իսկ մյուս ծայրը բռնել է ստրկուհին։ Նկարիչը, որպեսզի երևա նաև երկանքի վերին մասը, այն պատկերել է բիշ թեք վիճակում։ Թասի վրա, բացի լծակավոր աղացներից, պատկերված է նաև ալյուրը մաղելու պրոցեսը, իսկ կենտրոնում՝ ավանակի միջոցով պտտվող, ավելի կատարյալ մեծ երկանքը։

Գառնիում հայտնաբերված հրվող երկանքները իրենց ընդհանուր կառուցվածքով և աշխատելու ձևով նման են վերը նկարագրված հունական աղացներին։ Սակայն առաջացած լինելով անմիջականորեն հրվող աղորիքներից և հանդիսանալով նրանց ավելի կատարելագործված աստիճանը, մեծ չափով տարբերվում են հունականներից։ Անկասկած քարագործները գաղափար են ունեցել կամ տեսած են եղել հունական այդ աղացները, բայց Գառնիի հրվող երկանքները բոլորովին չեն հանդիսանում նրանց ընդօրինակությունները։ Նախ, մեր հրվող երկանքները այնպիսի քառանկյունի ձևեր չունեն, ինչպիսիք ունեն Հունաստանում և նրա գաղութներում հայտնաբերված հրվող աղացները։ Այնուհետև, հացահատիկի համար արված փոսերը և հատակի ճեղքերը շատ փոքր են՝ հակառակ հունականի մեծ փոսերի ու երկար ճեղքերի։ Մեր հրվող երկանքներից երկուսի ճեղքերը, հակառակ հունականի (որոնց բոլորի ճեղքերը անխտիր արված են ակոսների երկայնքով), հատում են լծակի համար արված ակոսները, բացի այդ, դրանցից մեկը կոզին ունի ձագար ամրացնելու համար արված փոսիկ, երկուսը ճեղքի շուրջն ունեն քիչ բարձր շուրթ, իսկ մեկն էլ՝ բարձր եզրեր. սրանք ևս բացակայում են հունական աղացներում։ Եվ վերջապես, լծակի միջոցով շարժման մեջ գրվող հունական երկանքներին շատ բնորոշ՝ աշխատող մակերեսների եզևնաձև և այլ ձևերի ակոսները բոլորովին բացակայում են Գառնիի լծակավոր աղորիքների վրա։ Դա պետք է բացատրել Գառնիի հրվող երկանքների քարի-

[19] Анфимов Н. В., Земледелие у меото-сарматских племен Прикубанья. „Материалы и исследования по археологии СССР", М.—Л., 1951, էջ 151, աղ. I, 5—6։

[20] Карасев А. Н., Раскопки Неаполя Скифского, КСИИМК, вып. XXXVII, 1951, էջ 167։

[21] Moritz L. A., նշվ. աշխ., էջ 51։

[22] Donald White, A Survey of Millstones from Morgantina. „American Journal of Archaeology" (AJA), 1963, № 2, էջ 204—205։

[23] Robinson D. M. and Graham I. W. նշվ. աշխ., էջ 332։

[24] Rostovtzeff M., Two Homeric Bowls in the Louvre, AJA. 1937, № 1 (XLI), էջ 86, 90։ Brand P., Schaffende Arbeit und bildende Kunst vov Mittelalter bis zur Gegenwart, Leipzig, 1928, I, Abb. 91; Гайдукевич В. Ф., Боспорское царство, էջ 99 և հտ., նկ. 10; Пономарев Н. А., նշվ. աշխ., էջ 66 և հտ., նկ. 37, 38։

(բազալտ) ծակոտկեն կառուցվածքով, որը բոլորովին ավելորդ էր դարձնում ակոսներ անելը։ Ահա այն հիմնական տարբերությունները, որոնք հաստատում են, որ մեր հրվող երկանքները առաջացել են հրվող աղորիքներից, այլներն՝ տեղական ծագում ունեն։

Հավանաբար Գառնիում ևս, որը արքունական ամառանոց էր ու զորակայան և վերամշակված հացահատիկի մեծ պահանջ ուներ, եղել են (դեռևս չբացված) հացահատիկի վերամշակման սենյակներ, ինչպես Կիմերիկում բացվածը և հունական թասերի վրա պատկերվածները։

Անցումը հրվող աղորիքներից հրվող երկանքներին այնքան երկար ժամանակ չի պահանջել, ինչպես պրիմիտիվ աղորիքից հրվող աղորիքներին անցնելը, որովհետև այս շրջանում Հայաստանը զարգացման շատ ավելի բարձր մակարդակի վրա էր գտնվում։ Հրվող երկանքը հանդես է գալիս II դ. մ. թ. ա. և շարունակել իր գոյությունը I—II դդ.։ Բայց նրա լայն տարածման շրջանը, մեր կարծիքով, մ. թ. ա. և մ. թ. առաջին դարերն են։

Աղալու գործիքների հետագա կատարելագործումը տանում է դեպի պտտվող երկանքը. մ. թ. ա. I դ. սկզբներին աղալու գործիքը նոր կենտրոնական բարելավման է ենթարկվում։ Այժմ լծակը, որը խանգարում էր հացահատիկն անմիջապես անցքի մեջ լցնելուն, փոխարինվում է բռնակով, որն ուղղակի ամրացվում է աղացի վերին քարի վրա արված փոսիկի մեջ, առանց օժանդակ միջոցների։ Իսկ տակի քարի կողքին ամրացված ուղղահայաց փայտե ձողը փոխարինվում է տակի քարի կենտրոնում ամրացված մետաղյա առանցքով, որը մտնելու էր վերին քարի՝ հացահատիկ լցնելու կլորացված ճեղքի մեջ։ Քանի որ սոնին շատ ավելի բարակ էր անցքի համեմատ, և որպեսզի աղացի վերին քարը շարժելիս չտատանվեր, տակի քարի աշխատող երեսին տալիս են բոլորակաձև ուռած, կորնթարդ ձև, իսկ վերին քարին՝ գոգավոր—կորնթարդ ձև, որը կենտրոնացնում էր վերին քարի շարժումը և հեշտացնում աղացված հացահատիկի դուրս թափվելը։ Գառնիում հայտնաբերվել են կորնթարդ մակերեսով[25] երկանքների երկու տակի և հինգ վերին քար (երկուսն ամբողջական)։ Կոնաձև երկանք հայտնաբերվել է նաև Հացավանում (տակի քար). այդպիսի մի կոտրված վերին քար էլ կա Պետական պատմական թանգարանում։ Կոնաձև երկանքների քննությունը ցույց է տալիս, որ դրանք միանգամից կլոր ձև չեն ընդունել և սկզբնական շրջանում դեռևս չեն պտտվել, այլ հրվող երկանքների նման շարժվել են աջ ու ձախ, որովհետև թեք բռնակը դեռևս հնարավորություն չի տվել պտտելու։ Միայն կլորանալուց և բռնակի ուղղահայաց դիրքը ընդունելուց հետո կորնթարդ մակերեսով երկանքը սկսում է պտտեցվել։ Քանի որ Պետական պատմական թանգարանում պահվող աղացի վերին քարի բեկորը (ինվ. № 574) կոնաձև երկանքին անցնելու ավելի սկզբնական աստիճանն է ցույց տալիս, մենք մեր քննությունը կսկսենք դրանից։

Նա դեռ կլոր չէ, բայց վրայից թեք բռնակ ունի, անցքի շուրջը՝ 3 սմ լայնությամբ և 1—1,5 սմ բարձրությամբ պսակ, որից դեպի եզրը նույն բարձրությամբ լայնացող մի շերտ է անցնում։ Այս շերտի ծայրին էլ գտնվում է 4 սմ տրամագծով բռնակի թեք անցքը (տախտ. 4, Ա)։ Աղացի քարն աշխատող մակերեսին ունի թեթև գոգավորություն։ Սրանից քիչ ավելի զարգացած ձև ունի Գառնիի կոնաձև երկանքներից մեկը, որի վերին քարը (ամբողջական) 40 սմ տրամագիծ և կենտրոնում 8 սմ բարձրություն ունի։ Սա արտաքինից ևս ուռուցիկ ձև ունի, ավելի մշակված է, ձագարաձև անցքի շուրջն ունի փոքր բարձրության պսակ։ Երկանքի եզրերը բարակ են, ուստի բռնակի ամրացման համար թումբ է թողնված, որի վրա թեք անցքն է։ Աշխատող մակերեսը գոգավոր է (տախտ. 4, Դ)։ Այս վերին քարը միանգամայն համապատասխանում է Գառնիում հայտնաբերված տակի քարերից մեկին, որն ամբողջական է։ Հավանական է, որ դրանք նույն երկանքի քարերն են (տախտ. 4, Բ), մանավանդ որ միևնույն նյութից են պատրաստված։ Տակի քարի եզրերը բիչ բարձր են մնացել. դա հետևանք է այն բանի, որ վրայի քարը սովորաբար տակի քարից քիչ ավելի փոքր էր լինում և ժամանակի ընթացքում տակի քարի եզրերը չմաշվելով բարձր էին մնում։ Տակի այս քարն ունի 42 սմ տրամագիծ, 12 սմ բարձրություն և բոլորակաձև թմբի կենտրոնում 4 սմ տրամագծով առանցքի համար անցք։ Այս երկանքը թեև կլոր է, բայց դեռևս չի պտտվել, այլ ավելի մեծ աղեղով է շարժվել։ Հաջորդը նույնպես կլոր է (բիչ կոտրված), 42 սմ տրամագիծ և 8 սմ հաստություն ունի։ Մշակված է կոպիտ, վերին մասում երևում են բութ գործիքի հետքեր։ Աշխատող մակերեսը գոգավոր է, հացահատիկ լցնելու անցքի շուրջը պսակ չունի, բռնակի անցքը թեք է։ Այս աղացն էլ

[25] Տակի քարի ուռուցիկ մակերեսի և վերին քարի համանման գոգավորության պատճառով մենք այդ ձևի աղացներն անվանել ենք «կորնթարդ մակերեսով» կամ «կոնաձև» երկանքներ։



Swjerawly 3



Swjerawly 1

չի պտտվել։ Մյուսը կոտրված է, կլոր և բոնակն էլ գրեթե ուղղահայաց, կոպիտ մշակում ունի, շառավիղը 22 սմ է, աշխատող մակերեսը գոգավոր է, իսկ վրան, անցքի շուրջը, ցածր պսակ ունի, որից դեպի եզրն է դնում նույն բարձրության մի շերտ. դրա վրա բոնակի անցքն է, որը գտնվում է անցքի և եզրի միջև (տախտ. 4, Դ)։ Սա արդեն պտտվել է։

Դառնիում հայտնաբերված մի այլ բեկոր ևս ուններ, որը շատ է մաշված (3 սմ հաստ.)։ Այն նույնպես պտտվել է, նման է վերոհիշյալ բեկորին, բայց ավելի լավ մշակում ունի։ Այս բեկորը միանգամայն համընկնում է 1961 թ. ամրոցի արևելյան պարսպի տակ նախկինում բացված (մ. թ. III դ. պատկանող) շենքի հիմքերից էլ ավելի խոր շերտից գտնված կլոր երկանքի տակի քարին (տր. 40 սմ), որի մի կողմը քիչ կոտրված է։ Պտտվող երկանքի մի ամբողջական տակի քար գտնվել է Հացավանի բերդից 1962 թ. պեղումների ժամանակ (տախտ. 4, Ե)։ Այն կանոնավոր կլոր ձև ունի, կորնթարդ մակերես, 42 սմ տրամագիծ։ Եզրերը բարձրացված չեն մնացել Դառնիի օրինակների նման, ըստ երևույթին վրայի քարը նույն չափի է եղել։ Պատրաստված է խոշոր ծակոտկեն բազալտից։

Կոնաձև երկանքներն իրենց զուգահեռներն ունեն Մերձսևծովյան քաղաքներում։ Այդպիսի երկանքներ են հայտնաբերվել Ֆանագորիայում՝ մ. թ. ա. III դ. պատկանող[26], Տիրիթաքիում (15 հատ)[27], Խերսոնեսում-[8]։ Վ. Դ. Բլավատսկին Խարակսի պեղումների ժամանակ (Յալթայի մոտ) հայտնաբերել է ութ պտտվող երկանք՝ 30—40 սմ տրամագծով։ Դրանք մոտավորապես պատկանում են I դ. մ. թ. ա.[29]։ Տիրիթաքիում հայտնաբերված մի շարք պտտվող երկանքներ (պատկանող III—I դդ. մ. թ. ա.) գտնվում են Սիմֆերոպոլի գավառագիտական թանգարանում[30]։ Նման երկանքներ հայտնաբերվել են Կերչում և պահվում են Կերչի թանգարանում. դրանք պատկանում են մ. թ. I դ.[31]։ Պտտվող կոնաձև երկանք հայտնաբերվել է Օլվիայում[32]։ Թեք բոնակի փոսիկ ունեցող, բայց հարթ աշխատող մակերեսով պտտվող կլոր երկանք գտնվել է Կուրանում (թվագրվում է մ. թ. I դ.)[33]։

Ընդհանրապես Բոսֆորյան թագավորության մեջ կլոր պտտվող երկանքները հրվող աղացների հետ հավասար գործածության մեջ մտան ուշ հելլենիստական և հռոմեական շրջանում[34]։ Խորեզմում ձեռքի առաջին երկանքները հանդես են գալիս Քուշանական կուլտուրայի ժամանակ՝ հռոմեական շրջանում (II—III դդ.), երբ շարունակվում էր անտիկ Խորեզմի ծաղկումը։ Մինչ այդ օգտագործել են մեծ չափերի աղորիքներ[35]։

Պտտվող երկանքների մասին հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում Գորդոն Չայլդը։ Նա ասում է, որ պտտվող երկանքներ գտնվել են Օլինթոսում (400 թ. մ. թ. ա.) և որ մ. թ. ա. 300 թ. հետո պտտվող երկանքներն սկսեցին արագորեն տարածվել զարգացած հունական քաղաքներում, Իտալիայում, Հյուսիսային Աֆրիկայում և Իսպանիայում։ Այլերից հյուսիս դրանք հանդես են գալիս Նվեյցարիայում, Կելտերի մոտ՝ մոտավորապես 200 թ. մ. թ. ա., Հարավային Անգլիայում՝ 100 թ. մ. թ. հետո, իսկ Շոտլանդիայում՝ 80 թ. մ. թ. հետո։ Հյուսիս-գերմանական ցեղերի մոտ դրանք չեն հանդիպում ընդհուպ մինչև մ. թ. 200 թ.[36]։

Մերձսևծովյան քաղաքներում հայտնաբերված կոնաձև երկանքների վերին քարերի հացահատիկ լցնելու համար արված փոսերը շատ մեծ են, այսինքն օգտագործված է ամբողջ վերին մակերեսը, և այդ պատճառով բոնակը կողքից է արված։ Կերչից և Տիրիթաքիից գտնվածները ունեն փոքրիկ ձագարանման փոս, որի շուրջը պտտվում է քիչ բարձր պսակը։ Լծակի անցքը գտնվում է շրջանաձևությունը խախտող ելուստի վրա։ Մեր կոնաձև երկանքները որոշ նմանություն ունեն այս երկրորդ տեսակին պատկանող երկանքներին։ Դրանց վրա որոշ չափով

[26] Кобылина М. М., Раскопки Фанагории, КСИИМК, вып. 37, էջ 232։
[27] Селиванов В. И., Археологические работы, СА, № 2.
[28] Белов Г. Д., Херсонес Таврический, 1948, Ленинград, էջ 56—57։
[29] Блаватский В. Д. Харакс, МИА, № 19, էջ 230, նկ. 4—2։
[30] Пономарев Н. А., Նշվ. աշխ., էջ 61, նկ. 343։
[31] Նույն տեղում, էջ 62, նկ. 340։
[32] Блаватский В. Д., Античная археология Северного Причерноморья, Москва, 1961, էջ 38, նկ. 10։
[33] Анфимов Н. В., Նշվ. աշխ., էջ 153, նկ. 1, 7—8։
[34] Гайдукевич В. Ф., Боспорское царство, էջ 100։
[35] Толстов С. П., Древний Хорезм, Опыт историко-археологического исследования, Москва, 1948, էջ 32, 33։
[36] Гордон Чайлд, Прогресс и археология, Москва, էջ 81։

դրացվում է հունական ազդեցություններ, բայց մեր երկանքների տեղական լինելու մասին կասկած չի կարող լինել։ Նրանք առաջացել են հրվող երկանքներից (որոնց որոշ ձևեր անցել են կոնաձև երկանքին), պատրաստված են տեղական հումքից։ Մեր ունեցած աղացները, ինչպես վերը տեսանք, պարզ կերպով տալիս են հրող երկանքից կոնաձևին անցնելու աստիճանականություն։ Սա ամենահիմնական փաստն է, որ ապացուցում է նրանց տեղական ծագումը։ Մեր աղացների բռնակները թեք են և աստիճանաբար են ուղղվում, իսկ հունականներինը՝ բոլորն էլ ուղիղ են։ Մեր աղացների բռնակներն ամրացվել են եզրից ներս, տարբեր հեռավորությամբ, իսկ հունականները բռնակն ամրացնելու համար ունեն կլորություններ խափանող ելուստներ։ Հայկական աղացներն աստիճանաբար են կլորանում, իսկ հունականները սկզբից էլ կլոր են եղել։

Կոնաձև երկանքները ձևավորվելով մ. թ. առաջին դարերի ընթացքում, իրենց գոյությունը շարունակում են մինչև V—VI դդ.։ Նրանց ամենատարածված շրջանը, մեր կարծիքով, եղել է III—IV դդ.։

Հայաստանից տարված մի կլոր երկանքի վերին քար պահվում է Թբիլիսիի Պետական պատմական թանգարանում։ Այն հրատարակող Դ. Վ. Ծերեթելին գրում է, որ ուրարտական այլ իրերի հետ միասին երկանքը տարվել է Վարագից։ Ըստ երևույթին դա է պատճառը, որ նա սխալմամբ այն համարում է ուրարտական ջրաղացի քար[37]։ Ավելի ճիշտ է նկատել Պոնոմարևը, որ ոչ մի հիմք չկա այն ուրարտական ջրաղացի քար համարելու, որ դա լավագույն դեպքում կենդանու միջոցով շարժման մեջ դրվող աղացի վերին քար կարելի է համարել և հռոմեական ծագում ունի։ Նա ենթադրում է, որ աղացը Հայաստան է բերվել մ. թ. ա. I դ., Տիգրան II-ի դեմ Լուկուլլոսի մղած կռիվների ժամանակ[38]։ Այս ավելի ճիշտ թվագրումը մերժում է և փաստորեն Ծերեթելու սխալ տեսակետն է պաշտպանում Ս. Յու. Բեդուկաձեն[39]։ Մեր կարծիքով, այդ կլոր երկանքի վերին քարը պատրաստված է հռոմեական երկանքների օրինակով։ Նրանց նման ունի մեծ ձագարաձև խորություն՝ հացահատիկ լցնելու համար և աշխատող գոգավոր մակերեսին անցքի տակ ամրացված է մեծաղյա նեղ շերտ՝ առանցքի համար։ Այս տիպի երկանքները հռոմեական աշխարհում հանդես են եկել մ. թ. ա. III դ. կեսերին և առաջացել են ավանակի միջոցով պտտվող երկկոնաձև երկանքներից[40]։ Սակայն Վարագից տարված երկանքը, չնայած նման է հռոմեական երկանքներին, ունի նաև որոշ տարբերություններ. նախ ունի տեղական երկանքների նման լավ մշակում, այնուհետև՝ չափերով ավելի փոքր է, հետևաբար երկանքը շարժման մեջ է դրվել մարդու կողմից։ Այն պատկանում է մ. թ. ա. և մ. թ. առաջին դարերին և պատրաստվել է տեղում։ Անշուշտ, ավանակի միջոցով պտտվող երկանքներ եղել են նաև Հայաստանում։ Հունաստանում և Իտալիայում դրանք հայտնի են եղել V դ. մ. թ. ա.։ Գորդոն Չայլդը հաղորդում է, որ դրանք միջերկրածովյան ավազանի սահմաններում տարածվեցին միայն Ալեքսանդր Մակեդոնացու և հռոմեացիների կողմից կլասիկ տիպի նոր քաղաքների հիմնադրումից հետո[41]։ Ուստի, եթե արևմտյան աշխարհում դրանք մ. թ. ա. V դ. արդեն հայտնի էին և հելլենիստական շրջանում էլ տարածվել էին միջերկրածովյան ավազանում, ապա հազիվ թե Հայաստանում (որը սերտ կապերի մեջ էր հելլենիստական աշխարհի հետ) մ. թ. ա. և մ. թ. առաջին դարերում, գուցե և ավելի վաղ, չլինեին։ Ջորու միջոցով պտտվող աղացի մասին իր Թղթերում հիշատակում է Գրիգոր Մագիստրոսը[42]։ Ըստ երևույթին դեռևս միջին գարերում այն շարունակում էր իր գոյությունը։ Հուսանք, որ պեղումները հետագայում մեզ հնարավորություն կտան պարզություն մտցնելու այս և հացահատիկի վերամշակման վերաբերող մյուս մութ հարցերում։

V—VI դդ. սկսած կոնաձև երկանքները կորցնում են իրենց ձևը և աստիճանաբար տափակ ձև ընդունում։ Գառնիում հայտնաբերված այս տիպի երկանքների թիվն ամենաշատն է (3.5—10 սմ տրամագծով)։ Նրանց մեջ մենք ունենք այնպիսիները, որ դեռևս թեթևակի կորնթարդ են, պատրաստված են տարբեր քարերից՝ բազալտից, կարմրավուն գրանիտից և տուֆից։ Տուֆե երկանքներն ավելի ուշ են հանդես եկել և ծառայել են կավագործության մեջ օգ-

[37] Церетели Г. В., Урартские памятники Музея Грузии. Тбилиси, 1939, էջ 63—64։

[38] Пономарев Н. А., նշվ. աշխ., էջ 120—121։

[39] Бедукадзе С. Я., նշվ. աշխ., էջ 169։

[40] Пономарев Н. А., նշվ. աշխ., էջ 93, նկ. 69։

[41] Гордон Чайлд, նշվ. աշխ., էջ 82—83։

[42] «Գր. Մագիստրոսի թղթերը», Աղեքսանդրապոլ, 1910, թուղթ 88, էջ 241։

տագործվող անգոր կիրր աղալու համար։ Տափակ երկանքները արդեն օրս էլ մնում են օգտագործման մեջ։ Սակայն միջին դարերում, ջրաղացի լայն տարածումից հետո, ձեռքի երկանքը արդեն կորցնում է իր նախկին նշանակությունը, մնալով միայն անհատների մոտ՝ իրրև աղալու օժանդակ սարք։

Ժ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ИНТЕНСИВНОСТЬ ПРИЗНАКА СИНОНИМОВ КАЧЕСТВЕННЫХ ПРИЛАГАТЕЛЬНЫХ АНГЛИЙСКОГО ЯЗЫКА

При семантическом исследовании синонимических рядов strange и foreign нами были выявлены некоторые особенности синонимии качественных прилагательных. Речь идет прежде всего об интенсивности признака, так как, с одной стороны, этому вопросу отведено недостаточное место в литературе, а с другой—этот признак является составной частью определения синонимии прилагательных, как сопутствующая примета оттенка значения.

Изучены следующие два ряда:

1) strange, curious, singular, peculiar, quaint, queer, odd, eccentric, erratic, bizarre, uncouth.

2) foreign, alien, extraneous, extrinsic, outlandish.

В составе первого ряда изучено также прилагательное unique, которое, однако было исключено из данного ряда по причине, о которой ниже.

Выводы являются результатом анализа многочисленных контекстуальных сопряжений прилагательных по их пересекаемым значениям. При этом надо отметить, что утверждение ряда авторов о номинативности пересекаемого значения неверно. Подобное заключение основывается не только на анализе синонимических рядов strange и foreign, но также и на наблюдения, проведенные над эквивалентами foreign в армянском языке, где прилагательные *տարօրինակ, օտարոտի, խորթ* можно сопоставить только по их фигуральным значениям, не являющимся номинативными. В этой связи справедлива критика К. А. Сиповской взглядов А. А. Реформатского и К. Л. Левковской[1], что доказывается и на нашем материале. Этот неверный взгляд нашел отражение и в работе А. А. Уфимцевой, которая указывает, что „в своем основном значении слово служит опорным словом в соответствующем синонимическом ряду или синонимической паре"[2].

Единицы лексико-семантической группы strange по пересекаемым значениям, которые приводятся в синонимических словарях английского языка[3], не охватывают всех прилагательных, входящих в данный ряд[4].

[1] К. А. Сиповская. Некоторые проблемы синонимии. Сб. „Исследования по английской филологии", 11, Ленгосунт, 1961, стр. 181.

[2] А. А. Уфимцева. Опыт изучения лексики как системы. АН СССР, М., 1962, стр. 257.

[3] См. Allen F. Sturges. Synonyms and Antonyms, London, 1938. Crabb George. Crabb's English Synonymes, London, 1916. March's Thesaurus. Dictionary of the Engl. Language, N. Y., 1958. Fernal James F. Funk and Wagnalls Standart Handbook of Synonyms, Antonyms and Prepositions. N. Y., 1947. Delvtn Joseph. A Dictionary of Synonyms and Antonyms, N. Y., 1961. Roget's International Thesaurus, N. Y., 1951. Soule Rtchard. Soule's Dictionary of Synonyms and Synonymous Expressions, N. Y., 1961.

[4] Самое большое количество охвачено в синонимическом словаре Webster's Dictionary of Synonyms, Springfield, Mass., 1951. Однако, приводя синонимический ряд strange, словарь не включил такие синонимы этого прилагательного, как uncouth, bizarre и взамен дает outlandish, которое в настоящее время как „странный" является hapax legomenon и выступает в своем номинативном значении в смысле „далекий", отдаленный (от цивилизации) с уничижительным оттенком и весьма периферийным применением.